

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

„ԳԻՐԲ ԵՆԻՑ ՀԱՅՈՑ“

ԿԱՐԱՊԵՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԳԱՆՏԱՑԱՆ (ՀՈՎԻՎ ԵԴԵՄԻ ՀԱՅՈՑ)


(Տպարան Կ. Տոնիկյան, Քեյրուք, 1955 թ., 651 էջ)

Վերջերս Քեյրուքում լույս տեսավ Եղեմի հայոց հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Կարապետ ապագա քահանա Գալֆայանի «Գիրք Ենից Հայոց»-ը:

Արժանապատիվ Տ. Հայր, Սփյուռքի մեր քահանայական դասի մեջ, իր ուրուխտեղն է գրավում իր պատրաստությանը, հայրենասիրությանը, գրական ու վարչական իր վաստակներով: Երկար տարիներ նա այնքան ձեռնհասորեն հովվում է Եղեմի իր խնամքին հանձնված հոգևոր հոսք, միաժամանակ իր գրական լուսման գցելով Սփյուռքի մեր ազգային-եկեղեցական աղքատիկ գրականության գանձարանի մեջ և պատմա-քաղաքական մի շարք արժեքավոր մենագրություններով հարըստացնելով մեր հայագիտությունը: Նրա բեղուն գրչին են պատկանում «Չմամլություն»՝ իր ծննդավայր Գյուլի համառոտ պատմությունը, 1930 թվին հրատարակված Նյու-Յորքում, Կապագովկիո «Հայկական գոյցներ», ժողովրդային ասուլիսների հետարթրի մի ժողովածու (1945 թ.), ապա «Եղեմական հուշարձան և էջմիածնական հուշեր», Եղեմի հիմնարկության և հեղինակի գրական-հասարակական-ուսուցչական հիտնամյակին նվիրված (1950 թ.):

Հեղինակի շորորդ գիրքը՝ «Գիրք Ենից Հայոց»-ը նվիրված է 1915 թվականի մեծ եղեռնին, Համաշխարհային առաջին պատերազմի ծանր, արյունոտ օրերին նահատակված, բռնկված, անգթորեն հոշոտված մեկ միլիոն հայ ժողովրդի զավակների անմեռ հիշատակին: «Նս սույն Գիրք Ենից Հայոց»-ս սիրելի իր պարզության մեծ նվիրել մեր անշիրիմ հաճատակաց անմահական հիշատակին»,— գրում է հեղինակը (բնագծում-ները հեղինակին են— Ռ. Մ.):

Հայ եղեռնի մասին շատ է գրված ու խոսված, բայց չի սպառված այդ արյունոտ պատմությունը, որովհետև հայ ժողովրդի Համաշխարհային առաջին



պատերազմի օրերին ապրած ողբերգությունը, վիշտը, Թուրքիայի բացատրությունը, «մի անհուն ծով է, խավար մի ծով ահագին», և ահա արժանապատիվ Տ. Կարապետ քահանայի այդ «անհուն վշտի» նոր ու արյունոտ պատկերներն է բերում, ամբողջացնելու համար այդ ողբերգության նշանակությունն ու մեծությունը հայ ժողովրդի վշտի և կորստի տեսակետից:

Իսրայելացիների «նվից»-ի նմանողությամբ գիրքը վերնագրված է «Գիրք Ենից Հայոց», արև տարբերությամբ երախական «Ենից», որ հայոց «Ենից» մայր հողից ու ջրից է, հայրենի երկրի գաղտնից ու անտառներից, խաղաղ ու շեն օջախներից:

Հեղինակը իր ականատեսի անսուտ վկայությունն է բերում ցավոտ, հարազատ հուշերով և պատկերներով և զուգումը տեսած ու ապրած մարդկանց փառապանակություններով և պատմություններով հիշում է հայոց արյունոտ Գողգոթայի արտաճակի պատմությունը, նոր ու ահալոր մանրամասնություններով:

Գիրքի սկսում է հեղինակի ինքնակենսագրական տեղեկություններով, անհոգ մանկության օրերի և իր ծննդավայր գեյնցիկ Զոմախլուի բնության նկարագրություններով:

Մի փուն օրերու ծփծփուն թիվեր, այսպես էր հին օրերու կյանքը մեր» (էջ 13). այս տողերով է սկսում անցյալի անվիշտ հիշողությունների, դեպքերի և փրկությունների մանրապատումը: Անձանձրությամբ սահում են գրքի առաջին էջերը և ընթերցողի աչքի առջև բացվում է Արևմտյան Հայաստանի մի գեղեցիկ անկյունը իր հայեցի կոյրիտով, նահապետական իր բարբերով, ավանդություններով, հմայքով, ուրախություններով և թախիծով:

Ազգագրական մեծ արժեք են ներկայացնում վարպետ և քննասեր գրչով գրված հեղինակի ծննդավայրի բնակարանների, հազուադեպ պատմի, գեղեցական

բարձրորի, հավատալիքներ, խաղաղիկ առօրյա կյանքի հետաքրքիր և խայտառղի մեկարագրությունները, Մեր աչքի առաջ է ահա անցյալ դարի 2-րդ կեսին բռնակալության դաժան լծի տակ հեծող հայ գյուղի կյանքը:

Անցնում են մանկության ոսկի և հեքիաթային օրերը, Հեղինակի հասունացման հետ սկսում են և նրա առաջին վշտերն ու հուսախաբությունները. այժմ նա մեծերից լսում է շատ բաների մասին, հայ գյուղի և գյուղացու մասին: Գրքի այս մասերում զետեղված են անցյալ դարի հայ գյուղի ցավոտ և հուզող խնդիրները (կրոնական հոսանքներ, բողոքականություն, հողային խնդիրներ և այլն):

«Մեր կրթական կյանքը» խորագրի տակ տրված են մեր անցյալ կյանքի «զայգիալիկան» դպրոցների հետաքրքիր նկարագրությունները, Հեղինակի կենսագրական նոթերը, հիշողությունները, վանական դաստիարակությունը, ուսուցչական ու հասարակական կյանքը միահյուսվում են հայ գյուղի կյանքին, առօրյային, պայքարին: Հեղինակի կյանքի փոշու մանապարհը մասնին է այն մեծ ամբողջության, որ կոչվում է հայ գյուղի կյանքը: Նա իր կյանքի պատմումի մեջ խոսացնում է, արտացոլում հայ գյուղի ընդհանրությունն ու ամբողջությունը: Այդ մեծ ամբողջի մեջ մերթ անհետանում է հեղինակի կենսագրության ուղեցույց կարմիր թելը, այն վերածվում է հայկական հասարակական կյանքի, որովհետև անհատների կյանքը ինչ արժեք կարող է ունենալ, երբ հայ ժողովրդի ողջ ֆիզիկական կյանքը կանգնել էր օրհասական վտանգի առաջ:

Համաշխարհային առաջին պատերազմի արյունոտ օրերն էին... Այդ սև օրերում կար միայն մի սևեռուն միտք, կար մի մտահոգություն, դա հայ ժողովրդի գոյության հարցն էր, երբ ուզում էին ջնջել մեր ժողովրդի և՛ անցյալը, և՛ ներկան, և՛ ապագան, կարելի չէր մտածել անհատների մասին:

Հաջորդ գլուխներում (էջ 127—166) ցույց են տրված Համաշխարհային առաջին պատերազմի սկիզբը, բաղադրական անցուղարձերը Թյուրքիայում: Օսմանյան Սահմանագրության առաջին խանդավառ օրերը և դրանց անմիջապես հաջորդող ծանր, մղձավանջային, արյունոտ իրադարձությունները, հայկական կոտորածները, Գրքում ընդարձակ տեղ է հատկացված հայ ժողովրդի այդ ծանր և անօգնական օրերին ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործունեությունը:

Արևմտահայ ժողովրդի մեծ օրհասը սկիզբ էր առել արդեն 1914 թվականին սկսված Համաշխարհային առաջին պատերազմը եկավ միանգամայն սանձազերծելու արյունախում Թալուսթների և Էնվերների հայակեր, ոճրարար կամքը: 1915 թվականի ապրիլին ծայր առավ հայ ժողովրդի ողջացման ահավոր ու սարսափելի ծրագրի իրագործումը:

Կենտրոնից հրաման էր եկել՝ քնաջնջել Թյուրքիայում ապրող բոլոր հայերին, խնայել անգամ երեսներին, կանանց և ծեղերին (տե՛ս փաստաթղթեր, էջ 601—604):

«Մեր բռնագաղթը» վերնագրի տակ հեղինակը նկարագրում է բռնի արտագաղթը, հայկական ըզկտված, տանջված և հողոտված քաղաքների ահավոր հրքուրանքը անջատ հուշեր չեն, այլ մի ամբողջ ժողովրդի շարաշար նահատակության սոսկալի եղեռնապատումը, և այդ բոլորը՝ օրը ցերեկով, «հայասեր» եվրոպական պետությունների աչքի առջև:

Կարդում ես «Գիրք Ելից Հայոց»-ը և շարժանկարի ժապավենի պես աչքիդ առջևից անցնում են հայ Ֆենեսի, Զեյթունի, Հաջերի, Սեբաստիայի, Կարիի, հայ ինչե-սուի, հեղինակի ծննդավայր Չոմախուի և այլ հայկական գավառների «եկից» պատմությունները իրենց արյունոտ զրկվածներով, ահավոր զրկանքներով... Աչքիդ առաջ ներկայանում է դժո երեկ հայ կյանքով շնչող գյուղերի, դավառների համայնական գերեզմանոցը...

Արտագաղթ... կողոպուտ... մահ... սարսափ... մահուկների և կանանց անխիղճ սրախողխողում... նախճիր և լվանք... մասսայական բռնաջնքման քստմեղեքիչ տեսարաններ (տե՛ս կարնեցի Լուսնթաղ Գավառի պատմությունը՝ էջ 273, Զարայի հայրահիների պատմությունը՝ էջ 282, Եղեկիկյանի՝ էջ 517—530, Ռեթեսու Տեր Ներսեսյանի՝ էջ 331 և այլոց պատմությունները):

Աշխատում ես շարժանկի կարգալը, մտքով անցնում ես հայ ժողովրդի մարտիրոսացման արյունոտ ցեղերով... Բայց արցունքները սեղմում են կոկորդզ, ցնցվում ես ողջ էությունով, հայ ժողովրդի «անհուն վիշտը», զարհուրելի մղձավանջը՝ իր մղձավանջային ծանրությամբ չուղում է հոգուդ. «Սև օրի, դուռմա՛ր օրի էին»,— համաձայնվում ես հեղինակի հետ:

Գաղթի ճանապարհին՝ հոտի հետ նահատակվում էր նաև հոտի անձնվեր հովիվը, մտավորականը, արվեստագետը, գիտություն մարդը, աւետարականը, ողջակիզվում էր ողջ հայ ցեղը: Լինում էին նաև ընդլզման խրոխտ խոյաններ, բայց ինչ կարող էր անել անզեն մի ժողովուրդ, մինչև ատաղձները զինված, կազմակերպված բանակների դեմ: Հայ ժողովրդի այդ մարտիրոսությունը իր նմանը չունի բարբարոսությունների պատմության մեջ: Ու Մեղնում էր տարագրության արյունոտ մանապարհների վրա հայ ժողովուրդը գիտակից մահով, որպեսզի միշտ ապրեն գալիք հայ սերունդները:

Անցնում է ահավոր փոթորիկը հայ հողի և հայ սերունդի վրայով՝ արյունով, նախճիրով... Զարգարարի յոթադանից մազապուծ ազատված հայ թվայակները, «հայ մնացորդացը», ինչպես բնորոշում է հեղինակը իր ուրվականը պտտցնում է այս անգամ. անպատի անշուքի, անծայր, ավազուտ տարածություններում: Արյունոտ սարսափներից, տառապանքից և հոգեկան ծանր ապրումներից հյուժված, տրորված, զգկտված, անհուն ու սովահար հայ թվայակների ողբերգական կյանքի տարագրություններն է, որ հավաքել և տեղավորել է հարգարժան հեղինակը իր գրքի հաջորդ էջերում:

Գաթմայի, Եամի, Ռազգայի, Հալիպի, Դելի-Էզ-Զորի և այլ գաղթափայրերում, ամենահոտին աղքատության, սովի ու սրածուխի, համաճարակ հիվանդությունների

րի պայմաններում, հալածանքների, ահաբեկման, խռուսեցման, սարսափի, հավատափոխության վտանգի ենթարկված հայ մարդու կյանքն է պատկերվում իր ապրած կենդանի դժոխքում, Դանտեի դժոխքից ավելի ահավոր պատկերներով: Օրական հարյուրավոր գաղթականների կյանքեր, հեծված անապատի խորշակից, սովից, ծարավից, ընկնում են անհյուրընկալ երկնակամարի տակ: ամեն կողմ մահ, արցունք, անհուն վիշտ...

Հուսահատ և անմխիթար այդ օրերին, անապատում թափառող հայ «մնացորդաց» բարեկամության և օգնության ձեռք երկարեց արաբ ժողովուրդը, որը նույնպես հեծում էր սովախանական Թյուրքիայի արյունոտ թաթի տակ: Անմոռանալի են գրքի այն էջերը, ուր սրտահույզ դավադներ են տրված հայ և արաբ ժողովուրդների բարեկամության մասին: «Մենք այլևս խայտեր (եղբայրներ) էինք» — գրում է հեղինակը (էջ 461): Ազգային ազատագրական ճամբան բռնած արաբ ժողովուրդը սկսել էր արդեն հասկանալ կառավարության ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարած խարդախ քաղաքականությունը:

Նույնը և բուրգ ժողովրդի նկատմամբ: Իդուր չէ հեղինակը գրում տեղավորել «Քուրդ աֆտուակներ» խորագրեր (էջ 562), ուր ցույց է տրված բուրգ արտոլյանների դառնագին և ծանր վիճակը: Քուրդ պաշտոնյայի բերանով խոսում է ազգային անկախության հղիված ժողովրդի զավակը. «Կուրդը կրոնք ընչպիսի կազմի, երբ մարդիկ անոր անունով կոչույուտ, շարդ, սպանություն և պատերազմ կհրահրեն...» (էջ 561). «...Ով որ արդարության կապավիճի, հաղթանակը անորն է...» (էջ 562):

«1917-ի գաւուներ», «Զինադադար» խորագրի տակ հեղինակը տալիս է վերջին նկարագրությունները հայ տառապանքի: Հաշտություն... վերադարձ... Մահամերձ մարդկանց երեսին ժպտում է վերջին հույսի դառն ժպիտը... ու անապատներից, տարագրության մեջլ ճանապարհներից վերադառնում են կենդանի մեռյալները, անուտ վկաններ հայոց արյունոտ եղեռնի, և որոնք իրենց հաղթարավոր սիրելիներին թաղեցին Եփրատի պղտոր, վարարում ջրերում, անապատի կիղիշ ավազուներում անգերեզման, անշիրիմ...

«...Չմոռնալ հիշատակը ամեն անոնց, որոնք մեռան, որպեսզի մենք ապրենք: Եվ սիրել համոթեն հայ մնացորդը՝ անխտիր. և հույսով, անկեղծ հավատքով ողջունել թխպոտ ամպերին վեր ծիածանը խաղաղության, Արագածեն՝ Մասիս, արևելյան կողմն աշխարհի» (էջ 604):

«Գիրք Ելից Հայոց» վերջանում է հեղինակի լավատեսությամբ: Ի դեպ, պիտի ասել, որ հեղինակի այդ լավատեսությունը կարմիր թելի պես անցնում է գրքի սկզբից մինչև վերջ և այդ գրքի արժանիքներից է: Ամենասոսկալի, հուսահատ նկարագրություններից հետո անգամ հեղինակը մնում է լավատես և իր այդ լավատեսությամբ վարակում ընթերցողին: «Անոնք մեռան, որ հայն ու Հայաստանը ապրին հավիտյան», — ահա հեղինակի ջերմ համոզումը (էջ 530):

Գրքի վերջաբանում հեղինակի կողմից խանդավառ հիացմունքի խոսքեր կան նվիրված Մայր Հայրենիքի վերածննդին: Ազգային հպարտությամբ են հնչում նրա խոսքերը. «...Թյուրքը ամեն ճիգ թափեց, որ ընաչեն հայությունը... սակայն ի լուր աշխարհի կըրնանք հայտարարել, որ ինկաճ, բայց շմեռանք»: «Մեր կենդանի ըլլալուն լավագույն ապացույցը՝ մեր վերածննդ Մայր Հայրենիքի վերելքի սուրացող, գիտողները հիացնող և մեզ հեռավորներս անգամ ներշնչող կյանքն է, ինչպես նաև հետզհետե աճող և ինքզինքը արժեքներ է ձգող Սփյուռքի հայությունը» (էջ 609): «Վերածնող Մայր Հայրենիքը այսօր ապավով և երջանիկ իր կյանքը կկերտե Ան հայության մեծագույն մխիթարանը ու ներշնչան աղբյուրը կհանդիսանա, օժտված՝ բազմալի կարելիությամբ և հեռանկարներով» (էջ 608):

Այսպես է վերջանում հայրենասեր հեղինակի արժեքավոր այս գործը: Այն իսկապես հասել է իր նպատակին՝ հայ նոր սերնդի սրտում անկորնչելի դարձնել եղեռնի օրերին ընկած հայ նահատակների անմեռ հիշատակը, արժարժել հայրենասիրության վեհ կրակը հայալն սերունդների սրտերում, այդպիսով ամրացնելով նրանց ապրելու, հարատևելու ճիգը, ազգապահպանման սուրբ գործը:

«Գիրք Ելից Հայոց»ը հայերի սուրբ ավանդ է որդիներին: Կարգում ես այն և երգվում՝ անահման, անշահախնդիր ու սուրբ սիրով սիրել հայրենի հարապատ հողը, դրանով իսկ ամենամեծ հարգանքը մատուցած լինելով Հայրենիքի նահատակների անհայտ սուրբ շիրիմներին:

«Գիրք Ելից Հայոց»ը գրված է ճոխ, գեղեցիկ և պատկերավոր հայերենով: Լեզուն տեղ-տեղ հասնում է արձակ բանաստեղծության: Հեղինակը ունի պատմելու շնորհ և գրելու նուրբ ճաշակ: Գիրքը սկզբից մինչև վերջը կարդացվում է լարված հետաքրքրությամբ:

«Գիրք Ելից Հայոց»ը արժեքավոր է նաև իր պատմական, ազգագրական, տեղագրական հարուստ նյութերով, ընդ որում լայն տեղ է հատկացված ոչ միայն հայերի, այլ նաև օտարների (արաբների) առօրյա կենցաղի, բարքերի, սովորությունների ազգագրական նկարագրություններին: Գրքի վերջում տեղ են գտել հայկական ջարդերի կազմակերպիչներ Լևկերի, Թալաթի ստորագրություններով հայոց տարագրության ու ընաչենման վերաբերող փաստաթղթեր:

Գիրքը նկարազարդ է, նրանում տեղ են գտել մի շարք ազգային գործիչների, հոգևորականների նկարներ, ինչպես և հայկական կոտորածներին վերաբերյալ ւարսուզողների տեսարաններ, սրտաճվիկ պատկերներ: Գիրքը ձևավորված է գեղարվեստական ճաշակով: Արժանապատիվ հեղինակը խոշոր և գնահատելի գործ է կատարել վերոհիշյալ հատորի հրատարակումով: Նա լիովին հասել է իր առաջադրած նպատակին: Ընթերցասեր հայ հասարակությունը ջերմորեն կընդունի հայրենասեր հեղինակի ողջունելի այս երկը:

Բ. Մ.

